ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՄՇԱԿՎՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Երևան, 2025թ.

Նախաբան

Հողերի արդյունավետ օգտագործումը և վերականգնումը կարևոր նշանակություն ունեն Հայաստանի գյուղատնտեսության կայուն զարգացման, բնապահպանական կայունության և գյուղական համայնքների բարեկեցության համար: Տարիներ շարունակ հողային ռեսուրսների ոչ պատշաճ օգտագործումը, անապատացման գործընթացները և գյուղական բնակչության նվազումը հանգեցրել են վարելահողերի որակի անկման և մեծ թվով հողատարածքների լքման:

Համաձայն 2018 թվականի հողային հաշվեկշռի՝ գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 2044.5 հազ. հա, որից վարելահողերը՝ 445.6 հազ. հա: Սակայն, այս վարելահողերից մշակվել է միայն 242.8 հազ. հա կամ 54.5%-ը: Սա նշանակում է, որ վարելահողերի 45%-ից ավելին չի մշակվում: Այս խնդիրն ունի բազմաթիվ պատճառներ, մասնավորապես այն պայմանավորված է հողի մասնատվածությամբ, ոռոգման խնդիրներով, հողի բերրիության անկումով և գյուղական համայնքներից արտագաղթով:

Խնդիրների վերլուծություն

Հայաստանի գյուղատնտեսական ոլորտը բախվում է մի շարք մարտահրավերների, որոնք ազդում են հողերի արդյունավետ օգտագործման և գյուղական համայնքների զարգացման վրա: Ստորև ներկայացված են հիմնական խնդիրները՝ հիմնված հասանելի տվյալների և ուսումնասիրությունների վրա:

1. Անարդյունավետ մշակվող կամ չմշակվող վարելահողերի հիմնախնդիրը

Հայաստանում վարելահողերի զգալի մասը չի օգտագործվում նպատակային: Ըստ պաշտոնական տվյալների՝ վարելահողերի շուրջ 45%-ը չի մշակվում:[1]

Հիմնական պատճառներ՝

1. **Հողերի մասնատվածություն**

   Հայաստանում հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումը լրջորեն տուժում է հողերի մասնատվածության հետևանքով: Սեփականաշնորհման գործընթացից հետո ձևավորված հողօգտագործման կառուցվածքը հանգեցրել է այն իրավիճակին, երբ մեծ թվով փոքրածավալ, տարածքային առումով մեկուսացված հողակտորներ չեն ապահովում տնտեսապես շահավետ գործունեության իրականացում: Բացի տեխնիկական և ինստիտուցիոնալ խնդիրներից, մասնատվածության պատճառով հողօգտագործողները հաճախ ունեն սահմանափակ տեսլական՝ հողը դիտելու որպես ռազմավարական ռեսուրս:

[1] https://hy.armradio.am/archives/333850

Հիմնական խնդիրներ՝

- Հողակտորների չափերի փոքրություն և տարածքային սփռվածություն, ինչը խոչընդոտում է ռացիոնալ ծրագրավորման և կառավարման հնարավորությունը:

- Արտադրության մասշտաբի տնտեսության բացակայություն՝ բերքի ինքնարժեքի բարձրացում և մրցունակության նվազում:

- Մեխանիզացիայի և տեխնոլոգիական լուծումների կիրառման սահմանափակումներ:

- Ջրաբաշխման, ճանապարհային և այլ ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործման անհնարինություն:

- Համագործակցության ցածր մակարդակ՝ պայմանավորված սեփականության բաշխման, վստահության և կազմակերպչական խնդիրներով:

- Ներդրումների նկատմամբ նվազ հետաքրքրվածություն՝ փոքր հողակտորների կողմից տնտեսական արդարացում չապահովելու պատճառով:

2. Ոռոգման համակարգերի անբավարարություն

Ըստ էկոնոմիկայի նախարարության տվյալների՝ փաստացի ոռոգելի տարածքները կազմում են շուրջ 117 հազար հեկտար, ինչը շատ փոքր թիվ է ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի համեմատ:[2]

Հիմնական խնդիրներ՝

- Ոռոգման ենթակառուցվածքների մաշվածություն և ոչ բավարար վիճակ: Ոռոգման համակարգերի մեծ մասը պահանջում է արդիականացում:
  Հայաստանի ոռոգման համակարգերը ներառում են մոտ 17,000 կմ ջրագծեր և ջրանցքներ, որոնցից շուրջ 14,000 կմ-ը գտնվում է հողային պայմաններում: Այս համակարգերի ավելի քան 70%-ը հնացած է, ինչը հանգեցնում է ջրի զգալի կորուստների՝ մինչև 40-50%:[3]
- Ջրային ռեսուրսների անարդյունավետ կառավարում: Ոռոգման ջրի կորուստները և անարդյունավետ բաշխումը նվազեցնում են ոռոգման արդյունավետությունը:

3. Հողի դեգրադացիա և աղակալում

[2] https://hy.armradio.am/archives/333850
[3] https://evnreport.com/magazine-issues/irrigating-efficiently/?utm_source=chatgpt.com

ՀՀ-ում առկա է ավելի քան 24,000[4] հա աղակալված հողատարածք, որոնք այժմ դուրս են շրջանառությունից: Դրանց գերակշիռ մասը համայնքային սեփականություն է: Գյուղատնտեսական հողերի զգալի հատվածը ենթարկված է դեգրադացիայի տարբեր ձևերի՝ էրոզիա, աղակալում, բերրիության կորստի և կառուցվածքի խախտման ձևով: Հողերի դեգրադացիայի տարեկան տնտեսական վնասը Հայաստանում կազմում է շուրջ 111 միլիոն ԱՄՆ դոլար: [5] Դեգրադացիայի պատճառները բազմաշերտ են՝ ներառելով ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործոններ, որոնք փոխազդում են միմյանց հետ՝ խորացնելով հողի բերրիության նվազման գործընթացը:

Հիմնական խնդիրներ՝

- **Բնական գործոններ՝**
    - Ջրային և քամու էրոզիա՝ հատկապես լեռնային և լեռնահարթավայրային տարածքներում:
    - Երաշտների և տեղումների սեզոնային անբավարարության հետևանքով հողի խոնավության կտրուկ պակաս:
    - Սողանքային գոտիներում հողի կայունության կորուստ և ակտիվ սողանքային գործընթացներ:
- **Մարդածին գործոններ՝**
    - **Անարդյունավետ հողոգտագործման գործելակերպեր՝** ցանքաշրջանառության բացակայություն, չափից ավելի խորը մշակություն, հողերի միամշակաբույս գյուղատնտեսություն:
    - **Արոտավայրերի գերարածեցում**, ինչը հանգեցնում է բուսածածկույթի վերացման և հողի կառուցվածքի քայքայման:
    - **Անտառահատված տարածքները՝** դառնում են մերկ հողերի տարածման պատճառ՝ նպաստելով էրոզիային և հողի խոնավության կորստին: Անտառների հատումը խաթարում է բնական էկոհամակարգերը և բերում է մի շարք բացասական հետևանքների հողի որակի վրա: Երբ անտառապատ տարածքները մաքրվում են ծառերից, հողը մնում է անպաշտպան՝ ինչպես արևի ճառագայթներից, այնպես էլ քամու և տեղումների ազդեցությունից:

---

[4] https://www.panorama.am/am/news/2017/04/03/%D5%A1%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AE-%D5%B0%D5%B8%D5%B2/1755324?fb_comment_id=1312270745527242_1312279965526320/gallery/news/news/news

[5] https://documents1.worldbank.org/curated/en/099090523175040850/pdf/P17173815d072503018f461b8c8ded40056.pdf

- **Խոզանի հրդեհման վտանգները՝** շատ լուրջ են, հատկապես այն տարածքներում, որտեղ անտառահատում է տեղի ունեցել կամ բնական բուսականությունը խաթարված է: Խոզանի հրդեհը կարող է հանգեցնել անտառային հրդեհների, կենսաբազմազանության կորստի, հողի դեգրադացիայի, օդի աղտոտման, առողջական խնդիրների և գյուղատնտեսական ու նյութական մեծ վնասների:
    - **Հանքարդյունաբերության ազդեցություն՝** հողի մեխանիկական խաթարում, աղտոտում և էկոհամակարգերի ոչնչացում:

- **Աղակալում՝**
    - Ոռոգման և դրենաժային համակարգերի թերի կառավարումը հանգեցնում են հողում աղերի կուտակմանը:
    - Հատկապես Արարատյան դաշտավայրում դիտվում է աղակալման և եկրորդային աղակալման երևույթներ, որոնք կտրուկ նվազեցնում են հողի բերրիությունը:
    - Աղակալված հողերը դառնում են բույսերի համար անհասանելի՝ խաթարելով նորմալ սննդային ռեժիմը:
    - Աղակալման վերահսկման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը բարդացնում է մելիորացիոն միջոցառումների իրականացումը:

4. Գյուղական համայնքների շահագրգռվածության պակաս

Գյուղացիական տնտեսությունները հիմնականում փոքր են և չունեն բավարար ֆինանսական միջոցներ: Հայաստանում մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում շուրջ 1.5 հեկտար հողատարածք, որի 1 հեկտարը վարելահող է: Մինչև 0.5 հեկտար հողատարածք ունեցող գյուղացիական տնտեսությունները կազմում են ընդհանուրի շուրջ 42%-ը: [6]

Հիմնական խնդիրներ՝

- Փոքր հողակտորները դժվարացնում են արդյունավետ գյուղատնտեսության իրականացումը:

[6] https://hy.armradio.am/archives/333850

- Ֆինանսական ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը փոքր տնտեսվարողների համար նախատեսված շրջանառու միջոցների բացակայություն խոչընդոտում է նոր տեխնոլոգիաների և մեթոդների ներդրմանը:

- Ներկրվող գյուղմթերքի ցածր գին անմրցունակ է դարձնում

5. Արտագաղթ և աշխատուժի պակաս

Գյուղական բնակչության նվազումը և արտագաղթը հանգեցնում են աշխատուժի պակասի, ինչը բացասաբար է ազդում գյուղատնտեսության վրա:

Գյուղական բնակչության նվազման տվյալներ

- 2001 թվականին գյուղական բնակչությունը կազմում էր մոտ 1.2 միլիոն մարդ, մինչդեռ 2021 թվականին այդ թիվը նվազել է մինչև մոտ 1 միլիոն:
- Այս ընթացքում գյուղական բնակչության տոկոսային բաժինը ընդհանուր բնակչության մեջ նվազել է՝ 2001 թվականի 40%-ից մինչև 2021 թվականի մոտ 33%:[7]

Հիմնական խնդիրներ՝

- Աշխատուժի պակասի պատճառով շատ հողեր մնում են չմշակված:

- Արտագաղթը նվազեցնում է համայնքների սոցիալ-տնտեսական կենսունակությունը:

- Հայաստանի համար աշխատանքային միգրացիան տարիներ շարունակ հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր բաղադրիչ: Տնտեսական անկայունության, աշխատատեղերի սակավության և գյումարային եկամուտների բացակայության պայմաններում՝ բազմաթիվ հայեր, հատկապես՝ տղամարդիկ, տեղափոխվում են արտերկիր, որպեսզի աշխատեն շինարարության, սպասարկման, գյուղատնտեսության կամ այլ ոլորտներում:

Ամփոփագիր

Հայաստանի գյուղատնտեսական ոլորտի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է լուծել վերը նշված խնդիրները՝ ապահովելով հողերի արդյունավետ

[7] https://www.macrotrends.net/global-metrics/countries/arm/armenia/rural-population

օգտագործումը, ոռոգման համակարգերի արդիականացումը, հողի դեգրադացիայի կանխարգելումը, գյուղական համայնքների աջակցությունը և արտագաղթի նվազեցումը:

- Չմշակվող վարելահողերի աճ. Հայաստանում վարելահողերի հողերի ավելի քան 45%-ը չի մշակվում:
- Հայաստանում ոռոգման համակարգերի անկատարության հետևանքով մեծ մասը ոռոգելի հողատարածքների չի օգտագործվում նպատակային և արդյունավետ ձևով:
- Հողի դեգրադացիա և աղակալում. Ըստ Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Project Identification Form (PIF)» փաստաթղթի՝ Հայաստանի գյուղատնտեսական հողերի մոտ 60%-ը տուժած է հողի էրոզիայի հետևանքով, ինչը պայմանավորված է անտառահատումներով և ոչ արդյունավետ գյուղատնտեսական պրակտիկաներով:
- Գյուղական համայնքների շահագրգռվածության պակաս. Գյուղացիական տնտեսությունները հիմնականում փոքր են և չունեն բավարար ֆինանսական միջոցներ:
- Արտագաղթ և աշխատուժի պակաս. Գյուղաբնակների շրջաններում հողագործությամբ զբաղվողների թիվը նվազում է:

ՀՀ-ում վարելահողերի սակավօգտագործման պատճառների կառուցվածքային աղյուսակ

Տնտեսական	Սոցիալական	Բնապահպանական	Իրավական	Տեխնոլոգիական
Ֆինանսավորման պակաս	Գյուղական արտագաղթ	Հողի դեգրադացիա, Էրոզիա և աղակալման խնդիրներ	Հողային փաստաթղթերի անորոշություն	Հին մեթոդներ
Վարկերի սահմանափակ հասանելիություն	Աշխատուժի պակաս	Կլիմայի փոփոխություններ	Հողերի մասնատվածություն	Գիտելիքի պակաս
Անբարենպաստ շուկայական պայմաններ	Գյուղաբնակ հասարակության ծերացում	Ոռոգման ջրի պակաս	Քաղաքականության անկայունություն	Գիտահետազոտա-կան աջակցության պակաս

Պետական աջակցության պակաս (մասնավորապես՝ կայուն, օրգանական գյուղատնտեսության աջակցության ծրագրերի բացակայություն)	Շահագրգռվածու-թյան պակաս	Հողերի աղտոտում	Քարտեզագրման անճշտություններ, կադաստրային և իրական կորդինատների անհամապատասխանություն, սխալ դասակարգման խնդիրներ	Հյուծված մեքենատրակտո-րային պարկ
Ցածր եկամտաբերություն		Ոռոգման համակարգի անկատարություն, բացակայություն		

Նպատակը

Չնայած այն հանգամանքին, որ «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը» սահմանում է հողերի կառավարման քաղաքականության ռազմավարական մոտեցումներ՝ ուղղված անօգտագործելի, դեգրադացված և չմշակվող հողերի վերականգնմանը և արդյունավետ օգտագործմանը, փաստացի իրավիճակը ցույց է տալիս, որ հայեցակարգը դեռևս ի զորու չէ լուծել ոլորտում առկա խորքային խնդիրները: Սա վկայում է, որ նախատեսված մեխանիզմները՝ չմշակվող վարելահողերի վերագործարկման, կայուն գյուղատնտեսության խթանման և ներդրումների ներգրավման ուղղությամբ, բավարար արդյունավետությամբ չեն իրականացվում: Արդյունքում՝ հայեցակարգը մնում է հիմնականում հայեցողային փաստաթուղթ՝ առանց գործնական գործիքակազմի ու արդյունավետ գործադրման հստակ մեխանիզմների:

Այս փաստաթուղթը ներկայացնում է հողերի կառավարման քաղաքականության ռազմավարական մոտեցումներ՝ ուղղված անօգտագործելի, դեգրադացված և չմշակվող հողերի վերականգնմանը, դրանց օգտագործման խթանմանը և գյուղատնտեսական հողերի պոտենցիալի առավել արդյունավետ իրացմանը:

Այս քաղաքականության փաստաթուղթը նպատակ ունի առաջարկել կոնկրետ մեխանիզմներ՝ չմշակվող վարելահողերը վերամշակելու, կայուն գյուղատնտեսությունը խթանելու, ներդրումներ ներգրավելու և հողերի դեգրադացիան կանխարգելելու համար:

Պետական քաղաքականություն և աջակցության ծրագրեր

Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգում կան մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են չօգտագործվող վարելահողերի նպատակային օգտագործման բարձրացմանը: Ստորև առանձված են դրանցից հիմնականները՝ ըստ թեմատիկ ուղղությունների:

1. Դրույթներ, որոնք առնչվում են չօգտագործվող վարելահողերի ներգրավմանը

- **Հայեցակարգի ներածության մեջ նշվում է**, որ 2018 թվականի տվյալներով Հայաստանի վարելահողերի միայն 54.5%-ն է օգտագործվել նպատակային, ինչը ենթադրում է, որ մոտ 45%-ը չի մշակվել:
- **Գյուղատնտեսական հողերի չմշակման հիմնական պատճառներն են՝**
    - Հողակտորների փոքր չափերը և մասնատվածությունը
    - Ոռոգման ջրի հասանելիության բացակայությունը կամ անբավարար մատակարարումը
    - Գյուղատնտեսական տեխնիկայի անմատչելիությունը
    - Հողի բերրիության ցածր մակարդակը
    - Հողի սեփականատերերի երկրից դուրս գտնվելը
    - Ֆինանսական միջոցների բացակայությունը
- **Հայեցակարգի նպատակներից մեկը հստակորեն նշում է**, որ պետության քաղաքականությունն ուղղված է չօգտագործվող հողերի շրջանառության մեջ ներգրավմանը և հողի շուկայի զարգացմանը:

2. Հստակ մեխանիզմներ՝ չօգտագործվող վարելահողերի նպատակային օգտագործման խթանման համար

Հետևյալ քայլերն են նախատեսվում՝ որպես չօգտագործվող հողերի ներգրավման ուղղակի կամ անուղղակի մեխանիզմներ.

1. **Չօգտագործվող հողերի հաշվառման և դասակարգման համակարգի ներդրում**
    - Պետությունը նախատեսում է ստեղծել չօգտագործվող հողերի հաշվառման ու դասակարգման համակարգ, ինչը կնպաստի այդ հողերի նպատակային օգտագործման խթանմանը:
2. **Հողի շուկայի զարգացում և «Հողային բանկի» ստեղծում**

- Ծրագրվում է ներդնել «Հողային բանկ», որը կմիավորի չօգտագործվող հողերը և հնարավորություն կտա դրանք ժամանակավոր կամ երկարաժամկետ վարձակալության կամ վաճառքի հանձնել տնտեսվարողներին:
- Չօգտագործվող հողերի վաճառքը կամ վարձակալությունը կկատարվի աճուրդային եղանակով, ընդ որում՝ հատուկ նախապատվություն կտրվի հարևան տնտեսվարողներին և երիտասարդ գյուղատնտեսներին:

3. **Հողերի կոնսոլիդացիայի (միավորման) խթանում**
   - **Վարելահողերի խոշորացման** ծրագրերը, որոնք կներառեն նաև չօգտագործվող հողերի միավորումը, կօգնեն ստեղծել արդյունավետ ագրոարտադրական հողակտորներ:
4. **Հողի օգտագործման արդյունավետության բարձրացման խրախուսում**
   - Ներառված են տվյալների թվայնացում, ագրոքիմիական հետազոտությունների իրականացում, ինչը թույլ կտա ավելի հստակ պլանավորել հողերի արդյունավետ օգտագործումը, ներառյալ չօգտագործվող վարելահողերը:
5. **Մելիորատիվ վատ վիճակում գտնվող հողերի վերականգնում**
   - Հայեցակարգում հատուկ նշվում է աղուտ-ալկալի հողերի մելիորացման մասին, ինչը կարևոր քայլ է չմշակվող հողերը շրջանառության մեջ մտցնելու համար:
6. **Հողօգտագործման կարգավորող օրենսդրության բարեփոխումներ**
   - Ծրագրում ընդգրկված է «չօգտագործվող հողերի դասակարգման և հաշվառման կարգի հաստատման» մեխանիզմ, ինչը թույլ կտա ավելի նպատակային ծրագրեր մշակել դրանց մշակման համար:

Եզրակացություն

Հայեցակարգում առկա են մի շարք դրույթներ, որոնք առնչվում են չօգտագործվող վարելահողերի ներգրավմանը գյուղատնտեսական շրջանառության մեջ: Սակայն, չկա որևէ հատուկ պետական խրախուսման կամ սուբսիդավորման մեխանիզմ, որը կոնկրետ աջակցություն կտրամադրի չօգտագործվող հողերի մշակումը խթանելու համար:

Այս առումով հնարավոր բարելավումների համար կարելի է առաջարկել.
- **Ֆինանսական աջակցություն և խրախուսման մեխանիզմներ՝** չօգտագործվող վարելահողերը մշակող ֆերմերների համար:

- **Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում՝** չմշակվող հողերի ոռոգման ապահովման նպատակով:

- **Հողի շուկայի կարգավորման մեխանիզմների պարզեցում՝** սեփականատերերին հնարավորություն տալու ավելի դյուրին գործել հողային շուկայում:

Այսպիսով, հայեցակարգը որոշակի հիմքեր է դնում չօգտագործվող վարելահողերի ակտիվացման համար, սակայն գործնականում անհրաժեշտ են լրացուցիչ տնտեսական խթանման գործիքներ՝ դրանց մշակման արագացման համար:

Այս միջոցառումները հնարավորություն կտան ավելացնելու մշակվող վարելահողերի չափաբաժինը, բարձրացնելու գյուղատնտեսական արտադրողականությունը և ապահովելու Հայաստանի հողային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարումը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի վերլուծություն

Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերը կարևոր նշանակություն ունեն հողերի արդյունավետ օգտագործման և գյուղատնտեսական արտադրության խթանման համար: Տարբեր ծրագրերի շրջանակներում վարկային և փոխհատուցման մեխանիզմների կիրառմամբ պետությունը նպատակ ունի նպաստել ոլորտի զարգացմանը:

Ստորև ներկայացված են մի քանի ծրագրերի արդյունքների տվյալներ, որոնք ուղակիորեն կամ անուղակի միտված են նպաստելու հողերի օգտգործման բարելավմանը և նպաստելու վարելահողերի նպատակային օգտագործմանը:

Ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր

Արդյունքներ և ցուցանիշներ

- 2022 թվականին

Այգեհիմնման պետական ծրագրի շրջանակում հաստատվել է 2450 հա այգիների հիմնում:

Բարձրարժեք մշակաբույսերի մշակության նպատակով հաստատվել է 3,2 հա-ի հայտ:

Նախորդ ինտենսիվ այգեգործության ծրագրի շրջանակում հաստատվել է 197,8 հա-ի այգեհիմնման հայտեր:

- 2023 թվականին

Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում վարկային և փոխհատուցման բաղադրիչով հաստատվել է 2363 հա-ի այգեհիմնման հայտեր:

Ընդհանուր առմամբ, 5010.8 հա այգեհիմնման և 3.2 հա բարձրարժեք մշակաբույսերի մշակության հայտեր են հաստատվել:

Համատեքստ և առկա մարտահրավերներ

2023 թ.-ի տվյալներով, պետական աջակցությամբ մշակվել է 5014 հա հող, դարձել է բազմամյա տնկարկ, ինչը կազմում է չմշակվող վարելահողերի (202,800 հա) ընդամենը 2.47%-ը: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ չմշակվող հողերի վերականգնման և օգտագործման խթանման համար անհրաժեշտ են ավելի ընդգրկուն միջոցառումներ և երկարաժամկետ ծրագրեր:

Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագրի

Արդյունքներ և ցուցանիշներ

Ծրագրի շրջանակում Բերքաբեր բնակավայրում կնքվել է 45 պայմանագիր՝ 4.504 հա-ի ՞՞համար, իսկ Խաշթառակ բնակավայրում՝ 46 պայմանագիր՝ 2.441 հա-ի համար: Ծրագրի կայունության և մոնիթորինգի տվյալները բացակայում են: Սա չի կարող դիտարկվել, որպես ներդրում չմշակվող հողատարածքների օգտագործմանը նպաստող ծրագիր:

Հողային բարեփոխումների փորձնական ծրագիր

Ծրագրի շրջանակում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան, Նորակերտ և Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրերում իրականացվել է վարելահողերի և բազմամյա տնկարկների իրավական խնդիրների ամբողջական գույքագրում, իսկ Արմավիր համայնքի Մայիսյան բնակավայրում իրականացվել են չմշակվող հողերի գույքագրման աշխատանքներ: Հայթաղ բնակավայրում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռք է բերվել 11.4 հա ընդհանուր մակերեսով 39 հողակտոր:

ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր (2020թ. աշնանացան ցորեն)

Ծրագրի շրջանակում 2761 շահառուի կողմից իրականացվել է 15007 հա աշնանացան ցորենի ցանք:

ՀՀ-ում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր (2021թ. գարնանացան):

Ծրագրի շրջանակում 3736 շահառուի կողմից կատարվել է 13299.7 հա գարնանացան գարու, առվույտի և կորնգանի ցանք:

ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր (2021թ. աշնանացան ցորեն)

Ծրագրի շրջանակում 3922 շահառուի կողմից կատարվել է 12798.63 հա աշնանացան ցորենի ցանք:

ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականին տրամադրվել է շուրջ 4.59 մլրդ ՀՀ դրամ փոխհատուցում: Ծրագրի շրջանակում 22.483 շահառուի կողմից կատարվել է 55.278 հա աշնանացան ցորենի ցանք:

ՀՀ-ում բուսաբուծության պետական աջակցության ծրագիր 2024թ.

Ծրագրի իրականացման արդյունքում ավելացել է գարնանացան մի շարք մշակաբույսերի (հացահատիկային, հատիկաընդեղեն և բազմամյա խոտաբույսեր) ցանքատարածությունները ՀՀ ողջ տարածքում: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 19.197 հա գարնանացան:

Բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագիր

Բուսաբուծության աջակցության ծրագրի նպատակն է հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնման, դրանց մշակության արդյունավետության բարձրացման, համախառն արտադրանքի ավելացման միջոցով բարձրացնել պարենային ապահովվածության մակարդակը, ինչպես նաև բարելավել գյուղատնտեսական նշանակության հողերի որակական հատկանիշները:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2025 թվականին և ընդգրկելու է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Հայաստանի Հանրապետության

համապատասխան մարզի տարածքում խթանվում է աղյուսակում նշված մշակաբույսերի տեսակների մշակությունը:

Արտադրողականության բարձրացման նպատակով նախատեսվում է ցանքերն իրականացնել բացառապես հավաստագրված սերմերով:

Ծրագրով նախատեսվում է 2025 թվականին փոխհատուցել մինչև 100 հա մակերեսով հացահատիկային (աշնանացան և գարնանացան ցորեն, գարնանացան գարի, եգիպտացորեն, վարսակ, հաճար), հատիկաընդեղեն (ոլոռ, լոբի, ոսպ, սիսեռ) և կերային մշակաբույսերի (առվույտ, կորնգան, կերի ճակնդեղ) մշակության մեկ հեկտարի հաշվով կատարվող հիմնական աշխատանքների (վարի, ցանքի, բերքահավաքի) և սերմի արժեքի համար նախատեսված ծախսերի 50 տոկոսը:

Փոխհատուցումը կտրամադրվի հետևյալ սահմանաչափերով՝

- աշնանացան ցորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 80 000 դրամ,
- գարնանացան հացահատիկային մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 70 000 ՀՀ դրամ, իսկ եգիպտացորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 85 000 ՀՀ դրամ,
- հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 100 000 ՀՀ դրամ,
- կերային մշակաբույսերից առվույտի, կորնգանի 1 հեկտար մակերեսի մշակության հաշվով՝ 110 000 ՀՀ դրամ, իսկ կերի ճակնդեղի համար՝ 80 000 ՀՀ դրամ:

ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիր

Ծրագրի շրջանակում կնքվել է 2 պայմանագիր (10-30 հա հողերի միավորում), 3 պայմանագիր (30 – 100 հա հողերի միավորում) և ևս 9 պայմանագիր (5-30 հա հողերի միավորում):

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիրն ուղղված է գյուղատնտեսական հողերի արդյունավետ կառավարման բարելավմանը՝ խթանելով մասնատված հողերի միավորումը: Այս ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել ավելի խոշոր, տնտեսական առումով կայուն հողակտորներ, որոնք կնպաստեն արտադրողականության աճին, գործառնական ծախսերի նվազեցմանը և ներդրումների խթանմանը:

Սակայն ծրագրի շրջանակներում չկան կոնկրետ մեխանիզմներ կամ նշումներ չօգտագործվող վարելահողերի օգտագործման խթանման վերաբերյալ**:** Չնայած նրան, որ հողերի միավորումը կարող է անուղղակիորեն նպաստել չօգտագործվող հողերի

նպատակային ներգրավմանը, որևէ հատուկ գործիքակազմ կամ խրախուսման մեխանիզմ չի սահմանվում այս հողերի մշակումը խթանելու համար:

Միևնույն ժամանակ պարզ չէ այդ միավորված հողերի հետագա ճակատագիրը, արդյոք դրանք ենթարկվել են մշակման, կամ կա արդյոք պլանավորում: Միևնույն ժամանակ այդքան փոքր թվով պայմանագրերը հավաստում են, որ կոնսոլիդացիայի այս մեխանիզմն արդյունավետ չէ:

Չնայած պետական աջակցության ծրագրերի շրջանակում արձանագրված դրական ցուցանիշներին՝ Հայաստանի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է՝

- ✓ Հողերի վերականգնման և վերօգտագործման ծրագրերի ընդլայնում
- ✓ Վարկային և սուբսիդավորման քաղաքականության ուժեղացում
- ✓ Տեխնոլոգիական ներդրումների, կայուն և նորարարական գյուղատնտեսական մեթոդների խթանում

Ցավոք, չկա հետևողականություն հաջողված ծրագրերի շարունակականության ապահովման համար: Պետությունը պետք է իրականացնի չօգտագործվող վարելահողերի նպատակային նշանակության վերլուծություն, հողերի որակի քարտեզագրում և նպատակային օգտագործմանը նպաստող գործուղությունների ճանապարհային քարտեզ:

Առաջարկություններ

ՀՀ-ում վարելահողերի չմշակման և ոչ նպատակային օգտագործման դրդապատճառների զգալի մասը պայմանավորված է ոչ միայն տնտեսական գործոններով, այլ նաև հողի որակական վիճակի մասին ոչ ճշգրիտ տեղեկատվությամբ, մելիորացիոն խնդիրներով, ռեսուրսային և տեխնոլոգիական սահմանափակումներով: Հիմք ընդունելով աջակցության ծրագրերի թվային արդյունքները պարզ է դառնում, որ ներկայումս գործող պետական աջակցության ծրագրերի զգալի մասը թիրախային ազդեցություն չեն թողնում չմշակվող վարելահողերի արդյունավետ օգտագործման և նպատակային նշանակության վերականգնման վրա: Մասնավորապես, հողերի կոնսոլիդացիայի ծրագիրը իր առաջարկված մոդելով չի արդարացրել իրեն և կարիք ունի ամբողջական վերանայման: Փոխարենը առաջարկվում է մշակել և ներդնել հետևյալ պետական աջակցության գործիքակազմը:

Պետական աջակցության ծրագրեր՝ չօգտագործվող վարելահողերի օգտագործման խթանման նպատակով

1. Վարելահողերի դասակարգման և մոնիթորինգային նոր թվայնացված համակարգի ստեղծում և ներդրում

- Ներկայումս բազմաթիվ հողակտորներ ունեն վարելահողի գործառնական նշանակություն, մինչդեռ դրանց իրական բնութագրերը և որակական հատկանիշները չեն համապատասխանում հողատեսքի նման դասակարգման: Մասնավորապես խնդիրը վերաբերվում է անջրդի III և IV-րդ կարգի վարելահողերին: Դրանք ոչ միայն պիտանի չեն մշակության համար, այլ ձևավորում են չմշակվող վարելահողերի անփոփոխ մեծ մակերես: Այն դեպքում, երբ այդ հողատեսքերի ճիշտ դասակարգումը կնպաստի դրանց նպատակային օգտագործմանը:
- Պետք է վերանայել վարելահողի սահմանումը և անջրդի IV-րդ կարգի հողերը՝ հանել վարելահողերի կարգավիճակից: Առաջարկվում է վարելահողերի ամենամեծ չօգտագործվող մակերես ունեցող բնակավայրերից մի քանիսում պիլոտային ծրագիր իրականացնել: Դուրս բերել անջրդի III և IV-րդ կարգի վարելահողերը, դրանց դասակարգումը փոխել և հողօգտագործման այլ լուծումներ առաջարկել:
- Առաջարկվում է իրականացնել պետական մասշտաբով հողերի հեռանկարային վերլուծություն: Հողերի դասակարգումը պետք է կատարվի ինտեգրված GIS համակարգով, որը կթարմացվի ըստ սեզոնային արբանյակային դիտարկումների և ագրոտեխնիկական վերլուծությունների:
- Հողի բերրիության քարտեզագրում և քարտի առկայությունը դարձնել պարտադիր:

2. Աղակալված և ալկալի հողերի մելիորացիոն ծրագիր

- Իրականացնել սուբսիդավորման մրցույթային ծրագիր աղակալված հողերի մելիորացիայի ու բարելավման եղանակների փորձարկման և նոր

առաջարկությունների ադապտացման համար: Ծրագրին մասնակցության հնարավորություն տալ ոչ միայն գիտահետազոտական, ուսումնական կառույցներին, այլ նաև մասնավոր սեկտորին: Պիլոտային ծրագրերը իրականացնել ոչ միայն համայնքային, այլ նաև սեփականաշնորհված աղակալված հողատարածքներում: Ստացված արդյունքների հիման վրա՝

- Մշակել և ներդնել պետական մելորացիոն ծրագիր՝ ուղղված այդ հողերի աղազերծմանն ու ալկալիության նվազեցմանը՝ բիոռեմիդիացիայի և այլ բնական միջոցներով:
- Օգտագործել բնապահպանական ճշգրիտ մեթոդներ՝ գիպսավորում, գարնանային լվացման համակարգեր, միկրոբիոլոգիական վերականգնում:
- Ներգրավել միջազգային փորձ՝ այդ թվում ՄԱԿ-ի FAO, GEF և այլ համապատասխան կառույցներից՝ տեխնիկական ու ֆինանսական աջակցությամբ:

3. Հացահատիկային մշակաբույսերի խթանման պետական ծրագիր՝ վերանայված պայմաններով

- Առաջարկվում է վերագործարկել ծրագիրը, սակայն տարբերակված չափանիշներով՝
  - Առաջնային սերմնաբուծության խթանում, սուբսիդավորումն անել միայն էլիտա և սուպերէլիտա տեսակի սերմանյութի ներկրման ու օգտագործման դեպքում (պարտադիր ոռոգվող հողատարածքների դեպքում): Պայման առաջադրելով տնտեսվարողի պարտադիր գրանցումը՝ որպես սերմարտադրող:
  - Սուբսիդավորել միայն էլիտա և սուպերէլիտա սերմանյութի ներկրումը՝ պարտադիր պահանջելով համապատասխանության հավաստագրերը:
  - Եկրորդային վերարտադրության սուբսիդավորումն (F1) անել միայն տեղական սերմարտադրողից գնում անելու դեպքում՝ խրախուսելու համար տեղական սերմնաբուծությունը՝ ոռոգվող և անջրդի հողատարածքների վրա:
  - Ստեղծել պետական աջակցության ծրագրից օգտվող տնտեսությունների թվայնացված բազա: Հատկապես հաշվառման օբյեկտ դիտարկելով հողակտորը՝ կադաստրային ծածկագրով: Հնարավորություն տալ նույն հողակտորի համար դիմել 2 տարի ժամկետով, իսկ 3-4-րդ տարին պարտավորել սեփական ներդրմամբ շարունակել մշակությունը: Միայն այս պարագայում հնարավորություն տալ օգտվել այլ պետական աջակցության ծրագրերից: Սա հնարավորություն կտա շրջանառվող չմշակվող հողերի ճշգրիտ տվյալների շտեմարան ձևավորելուց բացի, այս հողակտորները հանել, դուրս բերել չմշակվող հողերի ցանկից:
  - Սուբսիդավորման ծրագրից օգտվելու համար պարտադիր պահանջ ներառել հողի լաբորատոր փորձաքննության իրականացումը մինչև ցանքը:
  - Տրամադրվող գումարը սահմանել՝ սերմնաբուծական ցանքերի համար՝ 120,000 դրամ/հա, արտադրական ցանքերի համար նվազման սկզբունքով

նույն հողակտորի համար՝ առաջին տարին 100,000 դրամ, երկրորդ տարին՝ 80,000 դրամ:

- Այս ծրագրի շրջանակում անհրաժեշտ է հիմնել կամ արդիականացնել մերձսահմանային սերմերի լաբորատոր փորձաքննության կենտրոն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

3. Բազմամյա կերային բակլազգի և հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության խթանման պետական ծրագիր՝ վերանայված պայմաններով

ՇԵՆ ԲՀԿ-ի կողմից իրականացված «Անասնակերի արտադրություն և արոտների բարելավում՝ որպես ՔՈՎԻԴ-19 հետևանքների մեղմման միջոցառում» ծրագրի շրջանակում բարելավվել է 100 հա արոտավայր և մշակվել է 300.4 հա չօգտագործվող վարելահող:

Իսկ «Կերարտադրության ցուցադրական համայնք. բնական կերհանդակների բարելավում և չմշակվող վարելահողերի վերականգնում» ծրագրի շրջանակում իրականացվել են համապարփակ բարելավման միջոցառումներ՝ տարաբնույթ մեթոդաբանությունների կիրառմամբ:
Միջոցառման շրջանակում համայնքում վերականգնվել և/կամ բարելավվել է 123 հա հողատարածք, որոնցից, 20 հա արոտավայրեր, 20 հա խոտհարքներ, 83 հա վարելահողեր:

- Առաջարկվում է պետական սուբսիդավորման ծրագրում ունենալ հատուկ չափորոշիչներ՝ ուղղված բարձրարժեք բակլազգի խոտաբույսերի մշակության խթանմանը:
  - Բազմամյա բակլազգի կերային մշակաբույսերի սերմերի ծլունակությունը պետք է լինի առնվազն 80%:
  - Հատիկաընդեղեն մշակաբույսերի սերմերի ծլունակությունը պետք է լինի առնվազն 95%:
  - Պետք է սերմանյութը ուղեկցվի ՀՀ-ում իրականացված որակի համապատասխանության լաբորատոր փորձաքննության փաստաթղթերով:
  - Պարենի և կերարտադրության ցանքերի համար աջակցությունը սահմանել 100-110,000 ՀՀ դրամ:
  - Տեղական սերմարտադրության ցանքերի համար աջակցությունը սահմանել առնվազն 130,000 ՀՀ դրամ (պարտադիր ոռոգվող հողատարածքների դեպքում):

5. **Ագրոանտառաբուծության և օրգանական գյուղատնտեսության խթանում**

- Օրգանական գյուղատնտեսության պետական սուբսիդիաների տրամադրում՝ ըստ մշակաբույսերի և գործունեության տեսակի՝

    - պտուղների, հատապտուղների և բանջարեղենի, եթերայուղատու և դեղատու մշակաբույսերի, տնկիների դեպքում փոխհատուցումը 1 հեկտարի հաշվով յուրաքանչյուր տարի 300,000 ՀՀ դրամ,
    - հացահատիկի համար՝ 70,000 ՀՀ դրամ,
    - հատիկաընդեղենների համար՝ 120,000 ՀՀ դրամ,
    - կերային մշակաբույսերի համար՝ 100,000 ՀՀ դրամ,
    - օրգանական մեղվաբուծության տնտեսությունների սուբսիդավորում, մասնավորապես՝ 30-50 մեղվափոթակի դեպքում՝ 250, 000 ՀՀ դրամ, 51-100 մեղվափեթակի դեպքում՝ 350, 000 ՀՀ դրամ :
- Օրգանական սերտիֆիկացված տնտեսությունների համար աջակցության փաթեթների ներդրում: Մասնավորապես՝ ոռոգման ջրի 50% սուբսիդավորում, գյուղատնտեսական ապահովագրության սուբսիդավորման տոկոսադրույքի տարբերություն 10%-ի չափով:
- Միկրովարկեր և դրամաշնորհներ՝ օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերների համար:
- Սուբսիդավորման և պետական աջակցության ծրագրերի ներդրում՝ մասնավոր տնտեսվարողների և գյուղատնտեսական միավորների կողմից ագրոանտառների հիմնման համար: Մասնավորապես՝ ջրի խնայողության ու ոռոգման համակարգերի ներդրման և արժեքավոր տնկանյութի ձեռք բերման համար: